ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2016

Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա

Coca-Cola
Hellenic Bottling Company

SUSTAINABILITY

Բովանդակություն

Զեկույցի մասին 3
Նամակ Գլխավոր տնօրենից 4
Մեր Արժեքները 6
Մեր մարդիկ 6
Ռազմավարական շրջանակ 6
Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա 7
Կայուն Զարգացման ռազմավարություն 7
Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության Կայուն զարգացման 2020 հանձնառությունները 8
Սննդի որակ և Անվտանգություն 10
Աշխատանքի Անվտանգություն 13
Շրջակա Միջավայրի Պահպանություն 15
Ճանապարհային անվտանգություն և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում ... 18
Համայնքի Բարեկեցություն 18

Զեկույցի մասին

Զեկույցը պատրաստվել է Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա ընկերության կողմից և ներկայացնում է իր արդյունաբերական, սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի ազդեցության իջեցմանն ուղղված ծրագրերը: Զեկույցում բերվում են վերոնշյալ ծրագրերի ձեռքբերումները, որոնք ամբողջացնում ու ձևավորում են Ընկերության կայուն զարգացման ռազմավարությունը: Այս զեկույցը նաև նկարագրում է Արտադրանքի որակի, Աշխատանքի անվտանգության և Համայնքային աջակցության ծրագրերն ու ձեռքբերումները:

Այս տարվանից ի վեր Ընկերությունը սկիզբ է դրել ամենամյա զեկուցման շրջանին: Տվյալ զեկույցը ներառում է Ընկերության գրանցած արդյունքները՝ այդ թվում Կայունության հիմնական թիրախներն ու գրանցած հաջողությունները 2016 թվականի հունվարի 1-ից - դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

Նամակ Գլխավոր տնօրենից

Մեր ճանապարհորդության ամենասկզբից մենք ստանձնել ենք կայունության հանձնառություններ, որոնք արտացոլված են մեր Ընկերության առաքելության և արժեքների մեջ: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը կարևոր դեր է խաղում մեր բիզնես պլաններում և մեր աշխատակիցների կատարողականի գնահատման գործընթացում: Մեր բիզնեսի յուրաքանչյուր ոլորտում մենք նվիրված ենք մեր մարդկանց և համայնքին դեպի ավելի լավ ապագա ոգեշնչելուն: Այս հանձնառությունները ներկայացնում են մեր ընդհանուր ռազմավարության կարևորագույն մասը և ընկած են մեր Աճի ուղու հիմքում: Մենք ունենք լավ ձևավորված Կայուն զարգացման պլան, որը թիրախավորում է մեր բիզնեսի համար կարևոր սոցիալական և բնապահպանական խնդիրները: Կայուն զարգացմանը նպաստող նախաձեռնություններ ու ծրագրեր կյանքի կոչելով, ինչպես նաև տարեցտարի առաջընթաց գրանցելով՝ մենք նաև հասկանում ենք մեր սոցիալական կատարողականի ու տնտեսական ազդեցության չափելի ցուցանիշների ու թիրախների զեկուցման կարևորությունը: Այստեղ ցանկանում եմ ընդգծել «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի» ընկերության կողմից հայտարարված կայուն զարգացման խոստումնալից թիրախները, ինչը նշանակում է, որ մենք կշարունակենք կենտրոնացնել մեր ջանքերը ջրի և էներգիայի արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերում, ինչպես նաև իրականացնել մի շարք նախաձեռնություններ, որոնք կնպաստեն մեր համայնքների բարեկեցությանը: Կցանկանայի շեշտել Կայուն Զարգացման նախաձեռնություններում աշխատակիցների ներգրավածության կարևորությունը: Մենք բոլորս գիտակցում ենք, որ յուրաքանչյուրս կարող է իր ներդրումն ունենալ՝ նպաստելով Ընկերության աճին և դրա համար կայուն ապագա երաշխավորելով: Մեր Ընկերության ներսում մենք գիտենք, որ այս խնդիրները, ինչպես նաև Կայուն Զարգացման նոր թիրախները չեն կարող լուծվել միայն մեկ ընկերության կամ միայն արդյունաբերական ոլորտի կողմից: Մասնավոր ոլորտը և կազմակերպությունները պետք է համատեղ աշխատեն ավելի կայուն աշխարհ կառուցելու համար: Մենք կշարունակենք աշխատել մեր գործընկերների հետ այնպես, ինչպես ներկայումս զբաղվում ենք շրջակա միջավայրի խնդիրներով և նոր համագործակցության եզրեր կփնտրենք դրական փոփոխությունների համար:

Մենք բավականին ջանքեր ենք գործադրել մեր ստանձնած հանձնառություններին հավատարիմ մնալու համար: Այժմ մեր ձեռքբերումների ճանաչումը ևս մեկ քայլ է դեպի Կայուն Զարգացում:

Քրիստոֆ Սփեք

Գլխավոր Տնօրեն

Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա

Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերությունը զովացուցիչ ըմպելիքներ արտադրող ամենամեծ ընկերություններից մեկի՝ «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի» ընկերության մասնաճյուղն է, որը Հայաստանում գործունեություն է ծավալում 1996 թվականից և երկրում «Կոկա-Կոլա Ընկերության» միակ լիազորված շշալցնողն է: Մեր գործունեությունը սկսվել է նախկին Երևանի լիմոնադի գործարանի տարածքի գնմամ և «Կոկա-Կոլա» ընկերության ստանդարտներին ու պահանջներին համապատասխան արտադրամասի հիմնավորմամբ:

Մենք հանդիսանում ենք Կոկա-Կոլա արտադրանքների միակ լիազորված շշալցնողը Հայաստանում: Որպես Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության մաս, մենք նաև «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնիի» ընկերության այլ ապրանքանիշների, ինչպիսիք են՝ Դոբրի և Ռիչ հյութերն ու նեկտարները, Նեսթի թեյը, Բըրն էներգետիկ ըմպելիքները և Փաուերեիդ սպորտային ըմպելիքները, միակ մատակարարն ենք:

"Coca-Cola" "Coca-Cola Zero" "Fanta" "Sprite" "Bonaqua" "Burn"

"PowerAid" "Nestea" "Dobriy" "Rich" "Schweppes"

Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա

Տեսլական և Ռազմավարություն

Մեր կորպորատիվ տեսլականն է լինել անվերապահ առաջնորդ այն բոլոր շուկաներում, որտեղ մենք գործունեություն ենք ծավալում:

Սա է մեր մոտեցումը և այսպես ենք մենք մեզ դրսեվորում և գործում:

Մեր Արժեքները

Ամեն ինչ սկսվում է մեր արժեքներից: Դրանք մեզ դարձնում են տարբեր ու մոտիվացնում, ոգեշնչում ու ուժ են հաղորդում մեր նպատակների իրագործման համար:

- **Ճշմարտացիություն՝** մենք դավանում ենք հաստատուն արժեքներ, ազնիվ ենք մեր գործողություններում և գործում ենք ոչ թե պարզապես հեշտ, այլ ճիշտ կերպով:
- **Գերազանցություն՝** մենք ձգտում ենք զարմացնել՝ եռանդով և արագությամբ:
- **Սովորելով՝** մենք լսում ենք և սովորելու բնական ձգտում ունենք:
- **Հոգալով մեր մարդկանց մասին՝** մենք հավատ ունենք մեր մարդկանց նկատմամբ և ներդրումներով զարգացնում ենք նրանց
- **Գործելով միասնաբար՝** մենք հավատում ենք միասնական աշխատանքի ու ամեն հնարավորության պարագայում համագործակցության հզորությանը
- **Հաղթելով հաճախորդների հետ միասին՝** մեր բոլոր գործողությունների առանցքում մեր հաճախորդներն են:

Մեր մարդիկ

Մեր մարդիկ կարևորագույն դեր ունեն մեր բիզնեսի Կայուն Աճի գործընթացում: Այդ պատճառով մենք հանձնառու ենք հավաքագրել, զարգացնել ու ներգրավել տաղանդներին և խթանել բարձր կատարողականի մտածելակերպ բոլոր բիզնես գործընթացներում:

Ռազմավարական շրջանակ

Մեր ռազմավարական շրջանակը հիմնված է չորս ռազմավարական առաջնահերթությունների վրա՝ հանրային վստահություն, սպառողների ընտրություն, հաճախորդների նախապատվություն, ծախսերի առաջատարություն:

Մենք «խաղալով հաղթում» ենք Կոկա-Կոլա Ընկերության՝ մեր աճի գործընկերների հետ: Անզուգական տաղանդն ու բարձր կատարողականի մտածելակերպը թույլ են տալիս մեր ջանքերով հասնել սահմանված թիրախներին:

Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա

Կայուն Զարգացման ռազմավարություն

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն ու Կայուն Զարգացումը Կոկա-Կոլա ՀԲՔ-ի կորպորատիվ մշակույթի անբաժան մասն են: Դրանցով ենք առաջնորդվում որոշումներ ընդունելիս ու երկարաժամկետ ներդրումներ կատարելիս, որպեսզի երաշխավորենք կայուն արժեքների մատուցումը: Մեր բիզնես ռազմավարությունը կառուցված է մեր գործընկերների՝ սպառողների, հաճախորդների, համայնքների, աշխատակիցների և շահառուների հետ արժեք ստեղծելու ու տարածելու հիմնաքարային սկզբունքի վրա: Այսպես է սահմանվում այն, թե ինչպես ենք մենք վարում մեր բիզնեսը, իրականացնում մեր գործողություններն ու զարգացնում մեր հարաբերությունները:

Մենք աշխատում ենք մեր գործընկերների հետ մեր բիզնեսի նյութական խնդիրները պարզելու համար: Կայունության մեր հանձնառությունները սահմանվում են ելնելով մեր ռազմավարական առաջնահերթություններին սպառնացող նյութական խնդիրներից:

Կոկա-Կոլա ՀԲՔ-ի Կայուն Զարգացման չորս ռազմավարական նպատակներն են.

- Երաշխավորել մեր ապրանքների բարձր որակը
- Ապահովել մեր աշխատակիցների առողջությունն ու բարեկեցությունը
- Ամբողջ արժեքների շղթայում նվազեցնել շրջակա միջավայրի վրա մեր ունեցած հնարավոր ազդեցությունը
- Նպաստել համայնքների զարգացմանը

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության Կայուն զարգացման 2020 հանձնառությունները

ROBECOSAM
Sustainability Award
Industry Leader 2016

2016 թվականի Սեպտեմբերի 8-ին, ըստ Դոու Ջոնս Կայուն Զարգացման ցուցանիշների Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը երրորդ տարին անընդմեջ իր ոլորտում ճանաչվեց համաշխարհային առաջատար: Հիմնվելով մեր կայուն զարգացման ռազմավարության վրա՝ այժմ մենք հայտարարում ենք կայունության նոր թիրախներ:

<u>Համաձայն 2020 նոր թիրախների՝ մենք պարտավորվում ենք՝</u>

1. Կրճատել ջրի օգտագործումը 30 %-ով
2. Իջեցնել ածխածնային արտանետումները 50 %-ով
3. Մեր կողմից օգտագործվող էներգիայի 40% ստանալ վերականգնելի և մաքուր էներգիայի աղբյուներից:
4. Վերամշակել մեր կողմից շուկայում ներկայացված ընդհանուր փաթեթավորման 40%-ը:
5. Մեր կողմից օգտագործված պլաստիկ հումքի 20%-ը ստանալ վերամշակված պլաստիկից և/կամ վերականգնելի պլաստիկ նյութերից
6. 25%-ով կրճատել առաջնային փաթեթավորումը մեկ լիտր արտադրանքի հաշվով
7. Հավաստագրել մեր հիմնական գյուղատնտեսական բաղադրիչների մատակարարների 95%-ը համաձայն Կոկա-Կոլա Համակարգի Կայուն Գյուղատնտեսության ուղեցույցային սկզբունքների
8. Ներդնել տարեկան շահույթի /մինչև հարկում/ 2%-ը համայնքներում և կրկնապատկել աշխատանքային



ժամերին կամավորական նախաձեռնություններում աշխատակիցների մասնկացությունը՝ ապահովելով մեր աշխատակիցների մինչև 10%-ի ներգրավվածությունը:

Այս նոր ութ թիրախները հիմնված են նախորդ տարիներին հայտարարված ջրային ռեսուրսների օգտագործման և ածխաթթու գազի արտանետումների համապատասխանաբար 30% և 50%-ով կրճատման թիրախների վրա:

Մենք միշտ հավատարիմ ենք եղել կայուն զարգացմանը և մեր ջանքերով հասել ենք շոշափելի արդյունքներ:

2011 թվականից սկսած Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա ընկերությունը հասել է հետևյալ արդյունքներին՝

- Ջրի օգտագործման կրճատում 15%-ով, միաժամանակ արտադրության ծավալների ավելացում 20%-ով
- Ածխաթթու գազի արտանետումների կրճատում 12%-ով
- Էներգայի սպառման կրճատում 36%-ով

Այս շոշափելի արդյունքները փաստում են բոլորին դեպի ավելի լավ ապագա ոգեշնչելու մեր հանձնառության իրագործում մասին:

Սննդի որակ և Անվտանգություն

Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա ընկերությունը սահմանում է թիրախներ ոչ միայն սպառողներին առավելագույն որակով ապահովելու, այլ նաև հաճախորդներին բավարարելու համար: Նշված թիրախներին մենք հասնում ենք զովացուցիչ ըմպելիքների արտադրության համար սահմանված միջազգային ստանդարտների խիստ համապատասխանության, նոր տեխնոլոգիաների շարունակական կիրառման, արտադրական պրոցեսների կանոնավոր և վստահելի վերահսկողության և արտադրանքի փաթեթավորման շարունակական նորացման շնորհիվ:

Մեր Ընկերության արտադրական տարածքում մենք ներդրել ենք Սննդի Որակի և Անվտանգության ապահովման հետևյալ ծրագրերը՝

- Պատշաճ Արտադրական Գործելակերպի և Որակի Վերահսկողություն
- Վտանգի գնահատման կրիտիկական հսկման կետի (HACCP) սկզբունքների իրականացում
- Համապատասխանություն տեղական օրենքներին և կարգավորումներին
- Համապատասխանություն Սննդի Անվտանգության Համակարգի Սերտիֆիկացման FSSC 22000 ստանդարտին
- Համապատասխանություն «Կոկա-Կոլա» ընկերության ներքին ստանդարտներին

Որակի ապահովմանն ուղղված հիմնական ծրագրերն են՝

- Արտադրական հոսքագծերի վիճակագրական պրոցեսների վերահսկողություն
- Արտադրանքի զգայորոշման վերլուծություն
- Շուկայում արտադրանքի որակի մոնիթորինգ
- Շուկայում արտադրանքի ժամկետի մոնիթորինգ
- Սպառողների և հաճախորդների բողոքների կառավարում

Ընկերությունը արտադրության բոլոր փուլերում՝ հումքի ստացումից մինչև վերջնական արտադրանքի պահեստավորումը մշտապես մոնիթո-րինգի է ենթարկում համապա-տասխանությունը Պատշաճ Արտադրական Գործելակերպի սկզբունքներին: Պատշաճ Արտադրա- կան Գործելակերպի սկզբունքներին համապատասխանելիության գնահատ-ման նպատակով յուրաքանչյուր ամիս բոլոր տարածքներում տեղի են ունենում չպլանավորված աուդիտներ:

Ընկերությունում արտադրության որակի հսկողությունը իրականացվում է նորագույն լաբորատոր մեթոդների համաձայն: Ընկերությունը մշտապես նորացնում է լաբորատոր սարքավորումները:

Վտանգի գնահատման կրիտիկական հսկման կետի (HACCP) սկզբունքների իրականացումը արտադրության անվտանգ պրոցեսն ապահովող հիմնարար ծրագրերից է: Յուրա- քանչյուր տարի Ընկերությունը հաջողությամբ անցնում է Սննդի Անվտանգության Համակարգի FSSC 22000 ստանդարտի վերասերտի-ֆիկացման աուդիտը «ԷՍ-ՋԻ-ԷՍ» ընկերության կողմից, որը աշխարհում առաջատար աուդիտորական կազմա-կերպություններից մեկն է:

Որպեսզի գործարանից դուրս եկած բոլոր շշերը համապասխանեն որակի ամենաբարձր ստանդարտներին, մենք կիրառում ենք Վիճակագրական Պրոցեսի

Վերահսկողության ծրագիրը: Այն թույլ է տալիս կանխել արտադրանքի հնարավոր թերությունները՝ կիրառելով որակի ապահովմանն ուղղված կանխարգելիչ գործողություններ: Ընկերությունը կիրառում է նաև միջազգային վավերացում ստացած Զգայորոշման Ծրագիրը, որպեսզի ապահովի համային հատկությունների ստուգման ամենաբարձր որակը:

Արտադրանքի որակի մոնիթորինգը իրականացվում է ոչ միայն գործարանում, այլ նաև շուկայում համոզվելու համար, որ մենք առաջարկում ենք մեր սպառողներին լավագույն տարբերակը: Ծրագիրն իրականացվում է անկախ կազմա-կերպության կողմից: Պատահականորեն ընտրված ժամանակահատվածում, անանուն կերպով շուկայից նմուշառվում է արտադրանք և ուղարկվում անկախ լաբորատորիա վերլուծության: 2016 թվականի առաջին կեսին Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա ընկերությունը գրանցել է լավագույն արդյունքները և Կոկա-Կոլա արտադրող բոլոր ընկերությունների մեջ գրավել է առաջատար դիրք ըստ արտադրանքի Որակի Ինդեքսի:

Մեկ այլ ծրագիր է շուկայում արտադրանքի ժամկետի մոնիթորինգը, որի շնորհիվ մենք համոզվում ենք, որ մեր սպառողները ձեռք են բերում առավելագույնս թարմ արտադրանք: Շուկայում ժամկետի մոնիթորինգի ծրագիրը նույնպես իրականացվում է անկախ կազմակերպության կողմից: 2016 թվականին ամբողջ Խմբի մակարդակով մենք ձեռք բերեցինք առաջատար դիրք գազավորված ըմպելիքների կատեգորիայում:

Սպառողների կարծիքները և բողոքները գտնվում են Ընկերության ուշադրության կենտրոնում: 2016 թվականից ի վեր մենք սկսել ենք կիրառել Սպառողների Բողոքների միջգործառնական կառավարման ծրագիրը, որը թույլ է տալիս ապահովել յուրաքանչյուր բողոքի գրանցումը և դրան ժամանակին լուծում: 2016 թվականին գրանցված բոլոր բողոքները 100%-ով ստացել են դրական լուծում:

Տեղական շաքարի օգտագործում

2016 թվականին Ախուրյանի շաքարի գործարանը Կոկա-Կոլա ընկերության կողմից սերտիֆիկացում ստացավ: Գործարանը անցավ եռաստիճան աուդիտ, և այժմ տեղական արտադրության շաքարը օգտագործվում է մեր ըմպելիքների պատրաստման

համար: Տեղական շաքարի օգտագործումը մեզ թույլ է տալիս ապահովված լինել շաքարի մատակարարման խափանումներից: Տեղական հումքի օգտագործումը թույլ է տալիս նաև աջակցել Շիրակի մարզի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Օշարակի մաքրման նոր տեխնոլոգիա

2016 թվականին մենք տեղադրեցինք և գործարկեցինք շաքարի օշարակի մաքրման նորագույն տեխնոլոգիա, որն առավելագույնս մաքրում է օշարակը՝ բարձրացնելով արտադրանքի որակը:

Աշխատանքի Անվտանգություն

Մեր աշխատակիցների առողջությունը և անվտանգությունը մշտապես գտնվում են մեր Ընկերության ուշադրության կենտրոնում: Որպեսզի ապահովենք մեր բոլոր աշխատակիցների համար անվտանգ աշխատատեղ, մենք՝

ա) առաջնորդվում ենք միջազգային և տեղական օրենքներով,

բ) բոլոր աշխատակիցների համար տարեկան կազմակերպում ենք ուսուցողական դասընթացներ,

գ) մշակույթային և իրազեկվածության բարձրացման միջոցառումների շնորհիվ բարձրացնում ենք աշխատակիցների շրջանում անվտանգ աշխատանքի մշակույթը:

Տեղական և միջազգային օրենքներին և կարգավորումներին համապատասխանությունը ապահովելու համար բոլոր վտանգավոր օբյեկտների, սարքավո-

րումների և ճնշման տակ աշխատող անոթների համար անցկացնում ենք պարտադիր տարեկան վերասերտիֆիկացում: Յուրաքանչյուր տարի մեր Ընկերությունը անցնում է Առողջության և Աշխատաքի Անվտանգության ISO 18001 ստանդարտի համապատասխանության աուդիտ:

Առողջության և Անվտանգության վերաբերյալ աշխատակիցների և այցելուների իրազեկվածության բարձրացման նպատակով, մենք կատարում ենք տարբեր տեսակի հրահանգավորման դասընթացներ: Յուրաքանչյուր անձ, գործարան մուտք գործելուց առաջ, հրահանգավորվում է «Աշխատանքի Անվտանգության հիմնական դրույթների» և և գործարանում գործող կանոնների վերաբերյալ :

Ընկերության վտանգավոր օբյեկտներում աշխատող բոլոր աշխատակիցները պարտադիր ներգրավված են պետական

տարեկան դասընթացի և սերտիֆիկացման գործընթացում:

Ճգնաժամային իրավիճակներին՝ հրդեհի կամ երկրաշարժի ժամանակ արձագանքելու նպատակով Ընկերությունը ստեղծել է ներքին հատուկ արձա գանքման խմբեր, ովքեր պետք է ժամանակին ապահովեն աշխատակիցների տարահանումը: Այս խմբերի անդամները նույնպես անցնում են տարեկան դասընթացներ, որոնք կազմակերպվում են Ճգնաժամային Կառավարման ակադեմիայի կողմից:

Ընկերության աշխատակիցների առողջության և անվտանգ աշխատանքի մշակույթի զարգացման և դրանում աշխատակիցների ներգրավման նպատակով մենք կիրառում ենք «Պատահար առանց հետևանքի» (Near Miss), «Անվտանգության թեմատիկ զրույց» (Tool Box Talk) և «Աշխատեղում անվտանգության թեմատիկ զրույց» (Walk the Talk) ծրագրերը.

«Պատահար առանց հետևանքի» ծրագիրը խրախուսում է աշխատակիցներին տեղեկացնել ցանկացած վտանգի մասին, որը կարող է պոտենցիալ վնասել որևիցե այլ աշխատակցի: 2016 թվականին գրանցվել է 22 «Պատահար առանց հետևանքի» զեկույց ՝ 6-ով քիչ, քան նախորդ տարի:

«Աշխատեղում անվտանգության թեմատիկ զրույցները» նպատակ ունեն զարգացնել անվտանգության թեմայով քննարկումները անմիջական ղեկավարի և աշխատակցի միջև: Tool Box թեմաները ներառում են Առողջության և Անվտանգության թեմաների ճիշտ ընկալում և լուսաբանում: 2016 թվականին իրականացվել է 318 «Աշխատեղում անվտանգության թեմատիկ զրույց» ՝ 178-ով ավելի շատ, քան նախորդ տարի:

«Անվտանգության թեմատիկ զրույց» ծրագիրը թույլ է տալիս ստեղծել անվտանգության թեմայով երկխոսություն բաժնի ղեկավարի և աշխատակիցների միջև՝ վեր հանելով Առողջության և Անվտանգության վերաբերյալ առկա խնդիրները: 2016 թվականին տարբեր բաժինների ղեկավարների կողմից իրականացվել են 19 «Անվտանգության թեմատիկ զրույց»:

Մենք շարունակաբար մեծացնում ենք Առողջապահական և Անվտանգության ռիսկերի տեսանելիությունը: 2016 թվականին մենք կազմել ենք Օշարակի մշակման նոր տարածքի համար նախատեսված ուղեցույց՝ հնարավորություն տալով աշխատակիցներին ավելի արագ և հեշտությամբ տեղեկանալ տարածքում առկա ռիսկերի և դրանցից պաշտպանվելու մեթոդների մասին:

Որպեսզի մեր աշխատակիցները իրազեկված և պատրաստված լինեն արտակարգ իրավիճակներում, մենք Արաբկիր համայնքի հրշեջ ծառայության բաժնի հետ համատեղ ամեն տարի իրականացնում ենք վարժանքներ: 2016 թվականին ընկերության տարածքում գործող պայմանագրային աշխատակիցները նույնպես մասնակցեցին վարժանքին: Վարժանքի ընթացքում պայմանագրային աշխատակիցների 3 տարբեր խմբեր գտնվում էին գործարանի տարածքում: 6 րոպեի ընթացքում ամբողջ անձնակազմը տարհանվեց՝ 4 րոպեով ավելի արագ, քան նախորդ տարի:

2016 թվականի նոյեմբերին Խմբի բոլոր ընկերություններում տեղի ունեցավ Առողջության և Անվտանգության ամենամյա շաբաթը: Մեր գործարանում մենք քննարկեցինք այնպիդի թեմաներ, ինչպիսիք են գործողություններ արտակարգ իրավիճակներում, հակահրդեհային անվտանգություն, վարորդական և հետիոտնային անվտանգություն, առաջին օգնություն և էրգոնոմիկա: Բոլոր բաժիններում կազմակերպվել են դասընթացներ և քննարկումներ վերոնշյալ թեմաների վերաբերյալ: Մենք կազմել ենք երկրաշարժի ժամանակ առաջին գործողությունները նկարագրող գրքույկ, որը բաժանվել է բոլոր աշխատակիցներին:



Շրջակա Միջավայրի Պահպանություն

Ընկերության նպատակներից է արժեքների շղթայի բոլոր փուլերում նվազեցնել շրջակա միջավայրի վրա մեր ազդեցությունը: 2004 թվականից ի վեր մենք մեր համար սահմանում ենք տարեկան թիրախներ և աշխատում ենք հասնել մեր 2020 նպատակներին:

Մեր թիրախներն են՝

- Նվազեցնել մեկ լիտր ըմպելիքի արտադրության համար օգտագործվող ջրի քանակը,
- Նվազեցնել մեկ լիտր ըմպելիքի արտադրության համար օգտագործվող էներգիայի քանակը,
- Ավելացնել առաջացած աղբի վերամշակման ծավալը,
- Հետևողականորեն կառավարել վտանգավոր թափոնները,
- Ներգրավել մեր աշխատակիցներին շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ծրագրերում:

Ջրօգտագործման արդյունավետությունը



2016 թվականին մեր գործընթացներում ավելացավ ջրի սպառման նոր աղբյուրներ: Ջրի խնայողաբար օգտագործման սկզբունքների կիրառմամբ մենք կարողացանք ջրի օգտագործման ծավալները պահել պլանավորված ծավալների սահմաններում:

Էներգիայի օգտագործման արդյունավետությունը

2016 թվականին մեր գործընթացներում ավելացավ էներգիայի սպառման նոր աղբյուրներ: Էներգիայի խնայողաբար օգտագործման սկզբունքների կեռարմամբ, մենք կարողացանք պահպանել մեր էներգիայի օգտագործման արդյունավետությունը պլանավորված սահմաններում:



Թափոնների վերամշակման արդյունավետությունը



2016 թվականին մենք վերամշակեցինք մեր գործարանում առաջացած կոշտ թափոնների 96,8%-ը: Շրջակա միջավայրի համար վտանգավոր բոլոր թափոնները, ինչպիսիք են յուղերը, բենզինը, դիզելը և

այլ քիմիական նյութեր, առանձնացվում են Ընկերության հատուկ տարածքում և վերամշակման ուղարկվում՝ նվազեցնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Կորուստ առանց հետևանքի

Շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ աշխատակիցների իրա զեկվածության մակարդակի բարձրաց ման և ներգրավվածության խթանման ծրագրերից մեկն է «Կորուստ առանց հետևանքի» ծրագիրն է: Մենք մեր բոլոր աշխատակիցներին խրախուսում ենք զեկուցել ջրի, էներգիայի կամ թափոնների ցանկացած կորստի կամ ոչ նպատակային օգտագործման մասին, ինչը կօգնի ավելի արդյունավետ կիրառել ռեսուրսները: Այս տարի 103 հաշվետվություն է գրացնվել, նախորդ տարվա 34-ի դիմաց:

Գետի մաքրման աշխատանքներ

Ամեն տարի մենք կազմակերպում ենք գետի մաքրման աշխատանքներ մեր աշխատակիցների շրջանում բնապահ պանական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, ինչ պես նաև այլ ընկերությունների համար օրինակ ծառայելու նպատակով:

Այս ամառ մեր Ընկերության ավելի քան 100 աշխատակից մեր գործընկեր «Արտ Լանչ» ընկերության հետ համատեղ մաքրեցին Դալար գետի մերձափնյա ավելի քան 5.5 կմ երկարությամբ տարածք: Մեր Ընկերության աշխատակիցների երեխաները նույնպես միացան այս տարվա նախաձեռնությանը:

Արդյունքում մենք մաքրեցինք գետն ու դրա մերձափնյա տարածքը՝ հավաքելով 220 պարկ աղբ: Մենք կշարունակենք մեր համայնքներում մարդկանց մեջ շրջակա միջավայրը չաղտոտելու գաղափարի սերմանումը:

Ճանապարհային անվտանգություն և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

Մեր աշխատակիցների համար կայուն զարգացման հիմնական ուղղություն- ներից են ճանապարհային երթևեկության անվտանգությունը և մեր մարդատար և բեռնատար մեքենաների կոզմից ածխածնային արտանետումների կրճատումը:

Ճանապարհային երթևեկության անվտան-գությունը չափվում է ճանապարհատրանսպորտային պատահար-ների քանակի յուրաքանչյուր 1 միլիոն կմ վարելու հաշվով: 2016 թվականին մեր մարդատար և բեռնատար մեքենաների ընդհանուր վարքը նախորդ տարվա համեմատ աճել է 7%-ով, մինչդեռ պատահարների քանակը նվազել է 16%-ով:

Մեր մեքենաներից արտանետվող ածխածթթու գազը նվազեցնելու համար մեր Ընկերության վարորդների շրջանում զարգացնում ենք էկո-երթևեկության մշակույթը: Մշակվել են հատուկ դասընթացներ և գործարար զեկույցներ վարորդներին ավելի արդյունավետ երթևեկության հմտություններ սովորեցնելու նպատակով: Որպես 2016 թվականին նախորդ տարվա համեմատ 7% ավել երթուղի վարելով՝ վարորդները օգտագործել են 4,4%-ով ավելի քիչ վառելիք յուրաքանչյուր 100 կմ համար, ինչը ընդհանուր ածխաթթու գազի արտանետումները նվազեցրել է 6,6%-ով և յուրաքանչյուր վարած երթուղու ածխաթթու գազի արտանետումները նվազեցրել է 12,7%-ով:

Մեկ այլ հետաքրքիր նախաձեռնություն իրագործվել է 2015 թվականին: Մեքենաների անվադողերի գործածե-լիությունը երկարացնելու համար բեռնատարների անվադողերի մակերեսի վերամշակում է իրականացվել, արդեն օգտագործված անվադողին երկրորդ կյանք տալու համար նոր անվադողի ձև տալով: 2015 թվականից մենք վերաօգտագործել ենք 56 անվադող, ինչը թույլ է տվել խնայել 1680 կգ հումք:

Համայնքի Բարեկեցություն

Մեր առաքելությունն է բարելավել տեղական համայնքներում կյանքի որակը և ներդրումներ կատարել, ահա թե ինչու կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն ու կայուն զարգացումը մեր բիզնեսի կարևոր մասն են կազմում: Մենք ձգտում ենք գործել պատասխանատու կերպով՝ ներգրա- վելով շահառուներին և համայքներին, նպաստելով վերջիններիս կայուն զարգացմանը:

Ծնորհիվ մեր հիմնական բիզնես գործունեության, որը ստեղծում է եկամուտ մեր աշխատակիցներին, մատակարաներին վճարումների և պետական հարկերի համար, մեր ուշադրության կենտրոնում շարունակում են լինել համայքների հետ մեր համագործակցությունն ու ծրագրերը՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանմանն ու սոցիալական հարցերին:

Համայնքային աջակցության մեր ծրագրերը բաժանվում են 3 ուղղությունների՝

- Ջրային ռեսուրսների կառա- վարում
- Առողջ ապրելակերպի խթանում
- Երիտասարդների զարգացում

Ջրային ռեսուրսների կառավարում

Նվազող ստորգետնյա ջրային պաշարներն ու արտեզյան ջրերի ձկնաբուծարանների կողմից անվերա- հսկելի օգտագործումը Արարատ ու Արմավիր մարզերում շուրջ 30 համայնք թողել է առանց խմելու և ոռոգման ջրի հնարավորության:

2016թ. հուլիսի 20-ին Ընկերությունը Փոխըմբռնման հուշագիր է կնքել Ամերիկայի Միացյալ Նահագների Միջազգային Զարգացման Գործա- կալության և Հայաստանի Հանրապե- տության Բնապահպանության նախա- րարության հետ, որն ուղղված է ջրային ռեսուրսների կառավարման բարելավ- մանը Հայաստանում և մասնավորապես Արարատյան դաշտում՝ գյուղատընտ- եսության ու ձկնարտադրության տեսանկյունից կարևոր համայնքում:

Ծնորհիվ այս երկարաժամկետ համագործակցությանը մենք հետևողա- կանորեն կփորձենք Արարատյան դաշտում առկա մի շարք խնդիրների անդրադառնալ՝ թույլ տալով բնակիչներին հավելյալ տարածքներ ոռոգել, այդպիսով բարելավելով սոցիալ-տնտեսական իրավիճակն ու փոխելով նրանց կյանքը դեպի լավը:

Այս համագործակցությունը կաջակցի Արարատյան դաշտում ստորգետնյա ջրերի օգտագործման կրճատմանը և կայունացմանն ուղղված ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագրի շրջանակում իրականացվող գործընթաց- ներին: Այն ոչ միայն թույլ կտա լուծել պատասխանատու ջրային կառավարման խնդիրները, այլև կնպաստի հայկական համայնքի ջրի և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին իրազեկվածության բարձրացմանը:

2016թ. ԱՄՆ ՄԶԳ և «Կոկա-Կոլա» ընկերության համատեղ ջանքերը

թույլ տվեին Հայանիստ համայնքում վերականգնել ոռոգման համակարգը 40 հա-ից ավել գյուղատնտեսական հողի վրա: Հետագայում նախատեսվում է, որ մասնակիցները կնպաստեն Վերահսման և Տվյալների հավաքագրման ՍԿԱԴԱ համակարգերի ներդրմանը 20 ձկնաբուծարաններում, որպեսզի ստորգետնյա ջրերի սակավության խնդիր ունեցող ավելի մեծ տարածքներում բարելավեն ջրի կառավարումը:

Ակտիվ ապրելակերպի խթանում

«Կոկա-Կոլա» Ընկերությունը, «Վերա-դարձ Հայաստան» հիմնադրամի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ, սեպտեմբերի 30-ին ասուլիսով ազդարարեցին «Կոկա-Կոլա Երևան կիսամարաթոն» նախագծի մեկնարկը, որի նպատակն էր աջակցել Հայաստանում ակտիվ ապրելակերպի և վազքի մշակույթի զարգացմանը:

Երևանի կիսամարաթոնը դարձել էր կարևոր իրադարձություն: Այն ընդգրկվել էր միջազգային մարաթոնների օրացույցում և

տարածաշրջանի ամենամեծ և հայտնի միջոցառումներից էր: 2016 թվականին կիսամարաթոնին 40 երկրից մոտ 1500 վազորդ է մասնակցել:
«Կոկա-Կոլա Երևան կիսամարաթոնն» ուներ երկու բաղադրիչ. վազքի զարգացման ծրագիր վազորդների համար օգոստոսից մինչև նոյեմբեր կազմակերպվող բաց դասընթացների շարք, և «Կոկա-Կոլա Երևան կիսամարաթոն» մրցավազքը, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 16-ին:

Համայնքային բարեկեցությունը, մաս-նավորապես՝ ակտիվ և առողջ ապրելակերպը, մեր գլոբալ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարության առանցքային ուղղություններից է:

Մենք ոչ միայն ակտիվորեն աջակցում ենք միջազգային սպորտային միջոցա-ռումների, ինչպիսիք են ՈՒԵՖԱ Չեմպիոնների լիգան, ֆուտբոլի աշխարհի առաջնությունը և Օլիմպիական խաղերը, այլև ձգտում ենք խրախուսել տեղական սպորտային նախաձեռնությունները: Մի կողմից, այն լիովին համապատասխանում է Հայաստանում ակտիվ ապրելակերպը խթանելու մեր նպատակին, մյուս կողմից՝ Կոկա-Կոլա Երևան Կիսամարաթոնը տոնակատարություն էր, որը միավորեց բոլորիս և լավ տրամադրություն պարգևեց:

Կիսամարաթոնը բաց էր և պրոֆեսիոնալ, և սիրողական վազորդների համար՝ անկախ փորձառության մակարդակից: Այն 4 տարբեր երկարությամբ վազքուղի ուներ. 1 կմ՝ նախատեսված 6-12 տարեկան երեխաների համար, ինչպես նաև 5, 10 և 21 կմ երկարությամբ վազքուղիներ: Վերջին տարիներին կիսամարաթոնը դարձել է կարևոր սպորտային միջոցառում՝ ներգրավելով աշխարհի տարբեր ծայրերից բազում մասնակիցների, որոնք գալիս են

Հայաստան՝ վազքարշավին իրենց լավագույնս դրսևորելու համար:



Կոկա-Կոլա Երևան կիսամարաթոնն ուներ նաև բարեգործական բաղադրիչ: Վազքին մասնակցել են հաշմանդամ վազորդներ, որոնք մրցեցին 5 կմ վազքուղում: Բացի այդ Կիսամարաթոնի մասնակիցները հնարավորություն ունցան աջակցել ընտրված 4 բարեգործական նախագծերին՝ գրանցման հայտերը լրացնելիս առցանց նվիրատվություն կատարելով:

Ամանորյա տոնական նախաձեռ-նություններ

Մեր Ընկերության կողմից իրականացվող ամանորյա միջոցառումներն արդեն ավանդույթ են: Մենք փորձում ենք միավորել մարկանց և իրենց նախատոնական հոգսառատ օրերը լցնել ուրախ պահերով: Այս տարի կազմակերպվող միջոցառման շրջանակում մեր աշխատակիցները հավաքեցին քաղցրավենիքներ և նվերներ, որոնք փոխանցվեցին Վանաձոր քաղաքի մանկատան երեխաներին: Ձմեռ պապն և իր ընկերները այցելեցին երեխաներին և նրանց ուրախ և երջանիկ պահեր պարգևեցին՝ նվերներ բաժանելով:

Աջակցություն ազգային տոներին

Բիզնես գործունեությունից բացի մենք մշտապես կարևորում ենք հայ հասարակության կյանքին մեր Ընկերության ակտիվ մասնակցու- թյունը: Սովորույթի համաձայն, մեր գործընկերների հետ մի շարք միջոցառումներ նախաձեռնեցինք, որոնք այս գեղեցիկ օրն ավելի տոնական դարձրեցին թե Երևանում, թե մարզերում բնակվող երեխաների համար:

Միջոցառումների շարքը մեկնարկեց մայիսի 29-ին՝ Հյուսիսային պողոտայում բացօթյա համերգով և մուլտֆիլմերի հերոսների մասնակցությամբ բարեգործական ակցիայով: Այն ուղղված էր աջակցելու սոցիալապես անապահով երեխաների ընտանիք- ներին: Ընկերությունն այս տարի կրկին աջակցում է գործընկեր Օրրան

բարեգործական կազմակերպության՝ 200 երեխաների համար կազմակերպած տոնական միջոցառմանը՝ տրամադրելով զովացուցիչ ըմպելիքներ և բնական հյութեր: Քաղաքա- պետարանի հարևանությամբ գտնվող Մանկական այգում էլ երեխաներին տոնական միջոցառում, համերգ և խաղեր էին սպասվում, իսկ մինչ այդ կենտրոնական փողոցներում փոքրիկներին ընկերության աջակցու- թյամբ հյութեր և պաղպաղակ բաժանվեցին:

Հունիսի 1-ին մեր Ընկերությունը այլ միջոցառումների էլ մասնակցեց: Մասնավորապես, մի շարք գործընկեր սուպերմարկետներում

երեխաների համար հյութերի և կոնֆետների հյուրասիրություն կազմակերպվեց, նրանց նաև նվերներ բաժանվեցին:

Աջակցություն մշակութային նա-խաձեռնությանը

Սեպտեմբերի 9-ին մեկնարկեց Հայաստանում արդեն 11 տարի անընդմեջ անցկացվող «Թումանյանական հեքիաթի օր» խորագրով անցկացվող Տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնը, որը կազմակերպում էր Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոնը՝ ՅՈՒՆԻՄԱ-Հայաստանը: Փառատոնի նպատակն էր աշխուժացնել մշակութային կյանքը Հայաստանի մարզերում, Արցախում և Ջավախքում: Այս տարի այն անցկացվեց Լոռու, Շիրակի մարզերում, նաև Երևանում: 20-ամյա գործունեության ընթաց- քում մեր Ընկերությունը մեծապես կարևորել է հասարակության սոցիալական և մշակութային կյանքին իր մասնակցությունը: Այս ընթացքում մենք աջակցել ենք բազմաթիվ ծրագրերի ու միջոցառումների: Այս տարի մասնակցեցինք Տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի կազմակերպմանը, որը, անշուշտ, իր տեղն ունեցավ երկրի մշակութային կյանքում:

Այս փառատոնի կարևորագույն նպատակներից էր տիկնիկային արվեստի զարգացումը, միջմշակութային կապերի ամրապնդումը և, իհարկե, մանուկ հանդիսատեսին ինչպես հայկական, այնպես էլ միջազգային տիկնիկային մշակույթին և հեքիաթագրությանը ծանոթացնելը:

Փառատոնի օրերին Երևանում, Գյումրիում, Շիրակի և Լոռու մարզերի տարբեր համայնքներում անցկացվեցին

տիկնիկային ներկայացումներ, տրվեցին նաև տիկնիկային արվեստի վարպետության և տիկնիկագործության դասեր, անցկացվեցին նաև ամենօրյա երեկոյան ակումբներ, էքսկուրսիաներ, ցուցադրվեցին տեսաֆիլմեր:

Կայուն Զարգացման Զեկույց 2016
Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա